Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Արմավիրի մարզի <<Արտաշարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մաթեմատիկա (21 ժամ) , ֆիզկուլտուրա (9 ժամ),երգ-երաժշտություն (6 ժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

_Դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

-Անձը հաստատող փաստաթուղթ,

<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-Ինքնակենսագրություն (Ձև 5)

-Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր(առկայության դեպքում)

_Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 5-ին՝ ժամը 14:00-ին <<Արտաշարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում,հասցեն՝ 3-րդ փողոց,3-րդ փակուղի, 5-րդ շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094189809 հեռախոսահամարով: